

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

**ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լատվիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև «Պայմանավորվող Կողմեր»,

ընդունելով, որ մաքսային օրենսդրության իրավախախտումները վնասում են իրենց երկրների տնտեսական ու սոցիալական շահերին, ինչպես նաև առևտրի օրինական նպատակներին,

ընդունելով, որ ապրանքների ներմուծման կամ արտահանման ժամանակ մաքսատուրքերի, այլ հարկերի, տուրքերի և վճարների ճշգրիտ հաշվարկման ու գանձման երաշխավորման, ինչպես նաև արգելման, սահմանափակման և հսկողության դրույթների պատշաճ կիրառման կարևորությունը,

համոզված լինելով, որ մաքսային օրենսդրության իրավախախտումների կանխմանն ու ներմուծման և արտահանման մաքսատուրքերի, հարկերի, տուրքերի և վճարների ճշգրիտ հաշվարկման երաշխավորմանն ուղղված ջանքերը կարող են իրականացվել ավելի արդյունավետ իրենց մաքսային մարմինների միջև համագործակցության միջոցով,

հաշվի առնելով 1953թ. դեկտեմբերի 5-ի Մաքսային Համագործակցության Խորհրդի առաջարկությունը Փոխադարձ վարչական օգնության մասին,

հաշվի առնելով նաև Թմրամիջոցների մասին Միասնական Կոնվենցիայի (1961թ. մարտի 30, Նյու-Յորք), Հոգեներգործուն նյութերի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի (1971թ. փետրվարի 21, Վիեննա), ինչպես նաև Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի (1988թ. դեկտեմբերի 19, Վիեննա) դրույթները՝

համաձայնեցին հետևյալի մասին՝

**ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 1**

Սույն Համաձայնագրի իմաստով՝

1. **«Մաքսային օրենսդրություն»**՝ նշանակում է օրենքով կամ իրավական ակտով սահմանված դրույթներ ապրանքների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման կամ որևէ այլ մաքսային ընթացակարգի վերաբերյալ՝ կապված թե՛ մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսատուրքերի, այլ հարկերի, տուրքերի կամ վճարների, թե՛ արգելման, սահմանափակման կամ հսկողության միջոցառումների հետ:
2. **«Մաքսային իրավախախտում»**՝ նշանակում է մաքսային օրենսդրության որևէ խախտում, ինչպես նաև այդ օրենսդրության խախտման որևէ փորձ:
3. **«Մաքսային մարմին»**՝ նշանակում է
 - Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե,
 - Լատվիայի Հանրապետությունում՝ Լատվիայի Պետական եկամուտների ծառայության Ազգային մաքսային վարչություն:
4. **«Հարցում կատարող մաքսային մարմին»**՝ նշանակում է Պայմանավորվող Կողմի մաքսային մարմին, որը կատարում է օգնության հարցում մաքսային հարցերի վերաբերյալ:

5. «**Հարցում ստացող մաքսային մարմին**»՝ նշանակում է Պայմանավորվող Կողմի մաքսային մարմին, որը ստանում է օգնության հարցում մաքսային հարցերի վերաբերյալ:
6. «**Տեղեկատվություն**»՝ նշանակում է տվյալներ՝ ցանկացած ձևի, փաստաթղթեր, հաշվետվություններ կամ դրանց վավերացված կամ հաստատված պատճեններ կամ այլ հաղորդագրություններ:
7. «**Անձ**»՝ նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
8. «**Անձնական տվյալներ**»՝ նշանակում է ցանկացած տվյալ վերաբերող հայտնի կամ ճանաչման ենթակա անձին:
9. «**Վերահսկելի մատակարարում**»՝ նշանակում է թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների և սկզբնաճյուղերի կամ դրանց փոխարինող նյութերի, զենքերի, զինամթերքի, թունավոր գազի, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութերի, մեկ կամ ավել երկրների տարածքներով ապօրինի կամ կասկածելի առաքումների իրականացումը թույլատրող միջոցառում՝ այդ երկրների իրավասու մարմինների գիտությանը և հսկողության ներքո՝ այդպիսի իրավախախտումների կատարման մեջ ներգրավված անձանց բացահայտելու նպատակով:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

ՀՈԴՎԱԾ 2

1. Պայմանավորվող Կողմերը, իրենց մաքսային մարմինների միջոցով և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, փոխադարձ օգնություն են ցույց տալիս՝
 - ա) իրենց պետությունների տարածքներում գործող մաքսային օրենսդրության պահանջների կիրառման պայմանների հարցերով,
 - բ) մաքսային օրենսդրության խախտումները կանխելու, հետաքննություն անցկացնելու և դրանց դեմ պայքարելու նպատակով,
 - գ) մաքսային օրենսդրության կիրառմանը վերաբերող փաստաթղթեր ուղարկելու/ դրանց մասին ծանուցելու դեպքերում:
2. Սույն Համաձայնագրի շրջանակներում օգնությունը ցուցաբերվում է համաձայն հարցում ստացած Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող օրենսդրության և հարցում ստացող մաքսային մարմնի իրավասությունների ու հնարավորությունների սահմաններում: Անհրաժեշտությունից ելնելով, մաքսային մարմինը կարող է կազմակերպել, որ օգնությունը տրամադրվի մեկ այլ իրավասու մարմնի կողմից՝ հարցում ստացող Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 3

1. Մաքսային մարմինները կարող են, իրենց սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, տրամադրել միմյանց ամբողջ այն տեղեկատվությունը, որը կարող է օգտակար լինել հետևյալ իրավիճակներում պարզաբանում կատարելիս՝
 - ա) մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսատուրքերը, այլ հարկերը, տուրքերը և վճարները հավաքագրելիս և, հատկապես, տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել մաքսային նպատակով ապրանքների արժեքը որոշելիս և նրանց սակագնային դասակարգումը իրականացնելիս,
 - բ) ներմուծման և արտահանման արգելքներ ու սահմանափակումներ իրականացնելիս,
 - գ) Պայմանավորվող Կողմերից մեկի կամ երկուսի կողմից կնքված այլ համաձայնագրերով չկարգավորվող ապրանքների ծագման ազգային կանոնները կիրառելիս,
2. Եթե հարցում ստացող մաքսային մարմինը չի տիրապետում պահանջվող տեղեկատվությանը, ապա այն փնտրում է այդ տեղեկատվությունը՝ հարցում ստացող Կողմի պետության տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան:
3. Հարցում ստացող մաքսային մարմինը փնտրում է տեղեկատվությունն այնպես, ինչպես կփնտրեր այն իր համար:

ՀՈԴՎԱԾ 4

Հարցման դեպքում մաքսային մարմինները միմյանց տրամադրում են հետևյալ տեղեկատվությունը՝

ա) Պայմանավորվող Կողմերից մեկի տարածք ներմուծվող ապրանքները օրինական են արտահանվել մյուս Պայմանավորվող Կողմի տարածքից, թե ոչ,

բ) Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքից արտահանվող ապրանքները օրինական են ներմուծվել մյուս Պայմանավորվող Կողմի տարածք, թե ոչ,

գ) Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքից արտոնյալ պայմաններով արտահանման թույլտվություն ստացած ապրանքները պատշաճ կերպով են ներմուծվել մյուս Պայմանավորվող Կողմի տարածք, թե ոչ: Հասկացվում է, որ տեղեկատվությունը նույնպես պետք է տրամադրվի մաքսային հսկողության ցանկացած միջոցառման դեպքում, որին ենթարկվում են ապրանքները,

դ) ապրանքները, որոնք տարանցիկ փոխադրվել են որևէ Պայմանավորվող Կողմի պետության տարածքով օրինական են տարանցվել, թե ոչ:

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 5

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի մաքսային մարմինը, իր սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, մյուս Պայմանավորվող Կողմի մաքսային մարմնին տրամադրում է ամբողջ այն տեղեկատվությունը, որը հնարավոր է որ առնչություն ունենա մաքսային օրենսդրության իրավախախտումների հետ և, մասնավորապես,

ա) մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության իրավախախտումներ իրականացնող հայտնի կամ կասկածվող անձանց մասին,

բ) ապրանքների ապօրինի շրջանառության ժամանակ օգտագործվող նոր միջոցների ու մեթոդների մասին,

գ) ապօրինի շրջանառության մեջ գտնվող հայտնի ապրանքների մասին,

դ) մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության իրավախախտումներ կատարելու ժամանակ օգտագործվող կամ օգտագործման մեջ կասկածվող փոխադրամիջոցների և բեռնարկղների մասին,

ե) մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության իրավախախտումներ կատարելու ժամանակ օգտագործվող կամ օգտագործման մեջ կասկածվող տարածքների մասին:

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 6

1. Պայմանավորվող Կողմերից մեկի մաքսային մարմինը, իր նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, պետք է մյուս Պայմանավորվող Կողմի մաքսային մարմնին տրամադրի հաշվետվություններ, վկայությունների գրանցումներ, փաստաթղթերի հաստատված կրկնօրինակներ, որոնք տալիս են անհրաժեշտ տեղեկություններ հայտնի կամ ծրագրավորվող գործարքների վերաբերյալ, որոնցում առկա են կամ հնարավոր է առկա լինեն իրավախախտում՝ Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության նկատմամբ:

2. Տեղեկատվությունը բնօրինակով կարող է պահանջվել միայն այն դեպքում, երբ հաստատված կրկնօրինակները բավարար չեն: Ուղարկված բնօրինակները ենթակա է վերադարձման հնարավորին չափ շուտ:

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7

Սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրվող փաստաթղթերը կարող են փոխարինվել համակարգչային տեղեկատվությամբ՝ կատարված ցանկացած ձևով, նույն նպատակների համար: Միևնույն ժամանակ պետք է տրամադրվեն դրա հետ կապված ամբողջ տեղեկատվությունը՝ նյութերի մեկնաբանման կամ օգտագործման համար:

ԱՆՁԱՆՑ , ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 8

Պայմանավորվող Կողմերից մեկի մաքսային մարմինը, իր իրավասությունների ու հնարավորությունների սահմաններում, իր նախաձեռնությամբ կամ մյուս Պայմանավորվող Կողմերի մաքսային մարմնի հարցման դեպքում, պետք է հսկողություն իրականացնի

ա) այն անձանց տեղաշարժի, հատկապես երկրի տարածք մուտքի և ելքի նկատմամբ, որոնք հայտնի են կամ կասկածվում են իրավախախտումների կատարման մեջ կամ կատարել են իրավախախտումներ մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության,

բ) այն փոխադրամիջոցների և բեռնարկների նկատմամբ, որոնք հայտնի են կամ կասկածվում են մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության իրավախախտումներ կատարելու ժամանակ օգտագործման մեջ:

գ) մյուս Պայմանավորվող Կողմի մաքսային մարմնի կողմից հայտնած ապրանքների փոխադրումների նկատմամբ, որոնք նպաստում են դեպի իր պետության տարածք կամ իր պետության տարածքից դուրս զգալի ապօրինի փոխադրումներին, կամ կասկածվում են դրանում:

ՎԵՐԱՀՍԿԵԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ **ՀՈԴՎԱԾ 9**

1. Պայմանավորվող Կողմերը, գործելով իրենց ազգային օրենսդրության պահանջներին համապատասխան, իրենց հնարավորությունների սահմաններում, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ միջազգային մակարդակի վերահսկելի մատակարարման համապատասխան օգտագործումը թույլատրելու համար, հիմնվելով համաձայնագրերին և/կամ փոխադարձ համաձայնություններին՝ թմրամիջոցների, հոգեմերգործուն նյութերի և սկզբնաճյուղերի կամ դրանց փոխարինող նյութերի, զենքերի, զինամթերքի, թունավոր գազերի, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութերի ապօրինի առևտրում ներգրավված անձանց բացահայտելու և նրանց դեմ իրավական գործողություններ գործադրելու նպատակով:
2. Վերահսկելի մատակարարումը իրականացնելու մասին որոշումը կայացվում է դեպքից դեպք: Անհրաժեշտության դեպքում և, պայմանով, որ այն համապատասխանում է Պայմանավորվող Կողմերի ազգային օրենսդրությանը, կարող են հաշվի առնվել ձեռք բերված ֆինանսական համաձայնությունները և պայմանավորվածությունները:
3. Վերահսկելի մատակարարմանն ենթակա ապօրինի բեռները, իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ, կարող են կանգնեցվել և թույլատրվել շարունակելու ընթացքը անփոփոխ վիճակում կամ ամբողջությամբ կամ մասամբ փոխարինված թմրամիջոցներով, հոգեմերգործուն նյութերով և սկզբնաճյուղերով կամ դրանց փոխարինող նյութերով, զենքերով, զինամթերքով, թունավոր գազով, պայթուցիկ ու ռադիոակտիվ նյութերով:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 10

1. Հարցման դեպքում հարցում ստացող մաքսային մարմինը նախաձեռնում է պաշտոնական հետաքննություն այն գործարքների վերաբերյալ, որոնք հակասում են կամ հնարավոր է որ հակասեն հարցում կատարող Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրությանը: Նա տեղեկացնում է հարցում կատարող մաքսային մարմնին այդ հետաքննության արդյունքների մասին:
2. Այդ հետաքննությունները իրականացվում են հարցում ստացող Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող օրենսդրության համաձայն:
3. Հարցում ստացող մաքսային մարմինը կարող է թույլատրել հարցում կատարող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ներկա գտնվելու այդպիսի հետաքննություններին:
4. Պայմանավորվող Կողմերից մեկի մաքսային ծառայության ներկայացուցիչները սույն Համաձայնագրին համապատասխան մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պետք է կարողանան ներկայացնել հիմքեր իրենց պաշտոնեական լիազորությունների վերաբերյալ: Նրանք չպետք է կրեն համազգեստ և հրազեն:
5. Գտնվելու ընթացքում նրանց կտրամադրվի նույն պաշտպանվածությունը, ինչ որ մյուս Պայմանավորվող Կողմի մաքսային մարմիններին՝ այնտեղ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան, և նրանք պատասխանատվություն կկրեն իրենց կողմից կատարված ցանկացած իրավախախտման համար:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՎԿԱՆԵՐ **ՀՈԴՎԱԾ 11**

1. Եթե Պայմանավորվող Կողմերից մեկի դատարանը կամ իրավասու մարմինները ներկայացնում է մաքսային օրենսդրության իրավախախտումների հետ կապված իրենց առջև հանդես գալու պահանջ, մյուս Պայմանավորվող Կողմի մաքսային մարմինը կարող է լիազորել իր պաշտոնատար անձանց ներկայանալ որպես փորձագետներ կամ վկաներ այդ դատարաններում կամ իրավասու մարմինների առջև: Այդպիսի պաշտոնատար անձինք տալիս են վկայություն իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ արձանագրված փաստերի վերաբերյալ և իրենց տրված լիազորությունների շրջանակներում:
2. Փորձագետներ ու վկաներ լիազորելու պահանջում պետք է հստակ նշվեն հարցի էությունը և իրավիրվող պաշտոնատար անձանց իրավասության շրջանակը: Մաքսային պաշտոնատարների

որպես փորձագետների և վկաների հրավերքը պետք է ներկայացվի Պայմանավորվող Կողմի պետության գործող օրենսդրությանը համապատասխան:

3. Հարցում կատարող մաքսային մարմինը պետք է ձեռքնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները պաշտոնատար անձանց, իր տարածքում գտնվելու ընթացքում, անձնական անվտանգության պաշտպանության և ցուցմունքների գաղտնիության համար:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 12

1. Սույն Համաձայնագրի համաձայն ստացված տեղեկությունները չպետք է օգտագործվեն սույն Համաձայնագրի նպատակներից այլ նպատակների համար առանց դրանք ներկայացնող մաքսային մարմնի գրավոր համաձայնության: Այս դրույթները կիրառելի չեն թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների և սկզբնաճյուղների կամ դրանց փոխարինող նյութերի, զենքերի ու զինամթերքի, թունավոր գազերի, պայթուցիկ ու ռադիոակտիվ նյութերի հետ կապված իրավախախտումներին վերաբերող տեղեկատվության համար:
2. Սույն Համաձայնագրին համապատասխան որևէ ձևով փոխանցված ցանկացած տեղեկատվություն պետք է ունենա գաղտնի բնույթ: Այն պետք է պահվի պաշտոնական գաղտնիության պարտավորությամբ և պետք է պահպանվի այն ստացած Պայմանավորվող Կողմի պետության տարածքում նմանատիպ տեղեկությունների և փաստաթղթերի պահպանության համար գործող ազգային օրենսդրությամբ սահմանված ձևով:
3. Պայմանավորվող Կողմի մաքսային մարմինը, այնուամենայնիվ, կարող է, սույն Համաձայնագրի նպատակներին ու գործողության ոլորտին համապատասխան, վկայությունների իր գրանցումներում, հաշվետվություններում և ցուցմունքներում ու դատական քննության ընթացքում և դատարանում բերված մեղադրանքներում որպես ապացույց օգտագործել սույն Համաձայնագրին համապատասխան ձեռք բերված տեղեկատվությունը: Դատարանում, որպես ապացույց, այդպիսի տեղեկատվության օգտագործումը և կարևորությունը պետք է որոշվի գործող ազգային օրենսդրությամբ:

ԱՌԱՔՈՒՄ / ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 13

Հարցման դեպքում, հարցում ստացող մաքսային մարմինը պետք է, հարցում ստացող Պայմանավորվող Կողմի պետության տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան, առաքի/ծանուցի իր տարածքում մշտական բնակվող կամ հաստատված շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սույն Համաձայնագրի գործողության ոլորտին վերաբերող բոլոր փաստաթղթերը և որոշումները, որոնք տրամադրվում են հարցում կատարող մաքսային մարմնի կողմից:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 14

1. Սույն Համաձայնագրի համաձայն կատարվող հարցումը պետք է լինի գրավոր ձևի: Այդպիսի հարցման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը պետք է կցվեն հարցմանը: Անհրաժեշտության դեպքում, անհետաձգելի իրավիճակներում, կարող է ընդունվել բանավոր հարցումը, որը սակայն պետք է հաստատվի գրավոր՝ առանց հետաձգման:
2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն կատարված հարցումը պետք է ընդգրկի հետևյալ տեղեկատվությունը.
 - ա) հարցումը կատարող մաքսային մարմնի անվանումը,
 - բ) պահանջվող միջոցառումները,
 - գ) հարցման նպատակը և պատճառը,
 - դ) օրենսդրությունը և այլ իրավական նորմերը, որոնք դրված են հիմքում,
 - ե) հարցման սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերյալ հնարավորին չափ ճշգրիտ ու սպառիչ տեղեկություններ,
 - զ) համապատասխան փաստերի համառոտագիրը, բացառությամբ սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված դեպքերի:
3. Հարցումները պետք է ներկայացվեն ռուսերեն կամ անգլերեն լեզվով:

4. Եթե հարցումը չի համապատասխանում ձևակերպման պահանջներին, ապա կարող է պահանջվել դրա ուղղումը կամ ավարտուն տեսքի բերելը: Դա չպետք է ազդի դրա հետ կապված կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման վրա:
5. Հարցումների պատասխանները պետք է ներկայացվեն ռուսերեն կամ անգլերեն լեզվով:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՈՂՎԱԾ 15

1. Եթե հարցում ստացող մաքսային մարմինը գտնում է, որ պահանջվող օգնության ցուցաբերումը կարող է վնասել հարցում ստացող Պայմանավորվող Կողմի պետության ինքնիշխանությանը, հասարակական կարգին, անվտանգությանը կամ այլ էական շահերին, կամ կարող է հանգեցնել Պայմանավորվող Կողմի պետության տարածքում պահպանվող արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիքների գաղտնիության խախտմանը, ապա այդպիսի հարցումը կարող է մերժվել կամ օգնությունը կարող է տրամադրվել միայն որոշակի պայմանների բավարարման դեպքում:
2. Եթե օգնության հարցումը չի կարող իրականացվել, ապա հարցում կատարող մաքսային մարմինն անհապաղ պետք է հայտնվի դրա մասին և պետք է տեղեկացվի օգնության տրամադրումը մերժելու պատճառները:

ԾԱԽՍԵՐ

ՀՈՂՎԱԾ 16

1. Յուրաքանչյուր մաքսային մարմին կարող է հրաժարվել սույն Համաձայնագրի իրագործման համար կատարված ծախսերի փոխհատուցման բոլոր պահանջներից, բացառությամբ պետական ծառայողներ չհանդիսացող փորձագետներին, վկաներին, սղագրիչներին ու թարգմանիչներին վճարվող գումարներից:
2. Եթե հարցման իրականացումը պահանջում է կամ կպահանջի մեծ չափերի և ոչ սովորական բնույթի ծախսեր, ապա Պայմանավորվող Կողմերը պետք է խորհրդակցեն՝ որոշելու այն ժամկետները և պայմանները, որոնց համաձայն կիրականացվի հարցումը, ինչպես նաև այն եղանակը, որով կծածկվեն ծախսերը:

ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 17

1. Սույն Համաձայնագրով նախատեսվող օգնությունը պետք է ցուցաբերվի Պայմանավորվող Կողմերի մաքսային մարմինների ուղղակի մասնակցությամբ:
2. Պայմանավորվող Կողմերի մաքսային մարմինները համատեղ պետք է ձեռք բերեն առանձին պայմանավորվածություններ՝ սույն Համաձայնագրի իրագործման համար:
3. **Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով, մաքսային մարմինները պետք է նշանակեն մաքսային պաշտոնատար անձանց և փոխանակեն այդ անձանց անունների, պաշտոնների, հեռախոսի/ֆաքսի համարների, էլեկտրոնային փոստի հասցեների վերավերյալ նշում պարունակող ցուցակները:**
4. Պայմանավորվող Կողմերի մաքսային մարմինները պետք է ձգտեն փոխհամաձայնության գալով լուծել սույն համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ծագող ցանկացած տարաձայնությունները կամ կասկածները: Այն տարաձայնությունները, որոնց համար լուծումներ չեն գտնվում, պետք է կարգավորվեն դիվանագիտական ուղիներով:

ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ

ՀՈՂՎԱԾ 18

Սույն Համաձայնագիրն կիրառելի է երկու Պայմանավորվող Կողմերի մաքսային տարածքներում:

ՈՒՃԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ
ՀՈՂՎԱԾ 19

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Սույն Համաձայնագրի վերանայման նպատակով Պայմանավորվող Կողմերը կարող են բանակցել պահանջ ներկայացնելու դեպքում կամ այն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երրորդ տարվա վերջում, այն դեպքում եթե Կողմերը միմյանց չեն ծանուցել այդպիսի վերանայման անհրաժեշտության բացակայության մասին:
2. Պայմանավորվող Կողմերը պետք է դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցեն ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ ազգային իրավական պահանջների կատարման մասին: Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ վերջին ծանուցումը ստանալուց 60 (վաթսուն) օր հետո:
3. Սույն Համաձայնագիրը գործողությունը կարող է դադարեցվել դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով և դադարեցումը կմտնի ուժի մեջ մյուս Պայմանավորվող Կողմի կողմից այդպիսի ծանուցումը ստանալուց 6 (վեց) ամիս հետո:
4. Դադարեցման պահին կատարման ընթացքում գտնվող գործերը, այնուամենայնիվ, կավարտվեն սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Կատարված է ք.-ում, 200_ թ. «.....» հայերեն, լատիշերեն և անգլերեն լեզուներով՝ երկուական բնօրինակով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագող որևէ տարաձայնության դեպքում, կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
Հանրապետության

Լատվիայի

Կառավարության կողմից՝

Կառավարության կողմից՝

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006թ. ապրիլի 22-ից: